ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 23-ին՝ ճինգշաբթի.—*Այսօր Երեկոյան Մայր Աթոռ ժամանեց Ուրուգվայի հայոց հոգևոր հովիվ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը։*

* * *

Նոյեմբերի 26-ին՝ կիրակի.—*Մայր տաճարում պատարագեց արժ տ. Մկրտիչ քհն. Մկրտչյանը, և քարոզեց հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը՝ «Ես եմ լոյս, որ գայ առ իս ի խաւարի մի մնասցէ» բնաբանով։*

* * *

Դեկտեմբերի 2-ին՝ շաբաթ.—*Տոն «Սրբոց առաքելոց և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի»։*

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը։

* * *

Դեկտեմբերի 3-ին՝ կիրակի.—*Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը՝ «Եւ հիւանդաց բժշկութիւն» բնաբանով։*

* * *

Դեկտեմբերի 5-ին՝ երեքշաբթի.—*Մայր տաճարի լուսարարապետ և Հնդկաստանի և Մայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ մեկնեց Հնդկաստան՝ հովվական այցելության՝ տանելով Ն. Ս. Օծության օրհնությունները։ Գեր. Հայկազուն սրբազանը Հնդկաստանում Բանին կենաց քարոզությամբ կմխիթարի հավատացյալներին և, զբաղվելուց հետո թեմական-վարչական գործերով, կվերադառնա Մայր Աթոռ 1968 թվականի փետրվարի վերջերին։*

* * *

Դեկտեմբերի 10-ին՝ կիրակի.—*Գ կիրակի զկնի Յիսնակաց։*

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը՝ «Ահաւասիկ ամենայն ինչ պատրաստ է, եկայք ի հարսանիս» բնաբանով։

* * *

Դեկտեմբերի 17-ին՝ կիրակի.—*Դ կիրակի զկնի Յիսնակաց։*

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց արժ. տ. Հովհաննես քհն. Մարուքյանը՝ «Ես իմ հացն կենաց» բնաբանով։

* * *

Դեկտեմբերի 28-ին՝ ճինգշաբթի.—*Մայր Աթոռ ժամանեց Վիեննայի հայոց հոգևոր հովիվ և ծնևում եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոտ Մայր Աթոռի մնայուն ներկայացուցիչ հոգ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը՝ Վեհափառ Հայրապետի հրավերով։ Հոգ. հայր սուրբը այցելեց նաև այս առթիվ մայր հայրենիքի տեսարժան և պատմական վայրերը, եղավ Մաշտոցի անվան Մատենադարանում, գիտությունների ակադեմիայում։*

Հոգ. տ. Մեսրոպ ծ. վարդապետը իր պաշտոնատեղին մեկնեց հունվարի 4-ին։

* * *

Դեկտեմբերի 31-ին՝ կիրակի.—*Զ կիրակի Յիսնակաց։*

Մայր տաճարում պատարագեց ուխտաբար Մայր Աթոռում գտնվող հոգ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և քարոզեց «Նորոգող բնութեանց նորոգեա և զիս նորոգ զարդարեալ» բնաբանով։

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Հունվարի 1-ին՝ երկուշաբթի.—Գ օր Սբ-ննդեան պահոց։ Կաղանդ և տարեմուտ։

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։ Հավարտ ս. պատարագի Իշման ս. սեղանի առաջ տեղի ունեցավ հայրապետական մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։ Նոր տարվա առթիվ Մայր Աթոռի միաբանության անունից Վեհափառ Հայրապետի Ամանորը շնորհավորեց գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ Մայր Աթոռի պայծառության և Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց արևշատության մաղթանքներով։ Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը Վեհարանում բարեհաճեց ընդունել միաբանությանը և հոգևոր ճեմարանի սաներին՝ նոր տարվա առիթով։

* * *

Հունվարի 5-ին՝ ուրբաթ.—Ճրագալույց Մննդեան և Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Մայր Աթոռում ավանդական հանդիսությամբ տոնվեց Մննդյան Ճրագալույցը։ Մայր տաճարում երեկոյան ժամերգության ժամանակ հոգևոր ճեմարանի սարկավագները ընթերցեցին «Դանիել»-ի գիրքը։ Ճրագալույցի պատարագը մատուցեց հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և «Խորհուրդ մեծ» շարականի հնչյունների ներքո առաջնորդվեց Վեհարան, ուր օրհնեց Մայր Աթոռի միաբանությանը։

* * *

Հունվարի 7-ին՝ կիրակի.—Բ օր Մննդյան։ Յիշատակ մեռելոց։

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ։

* * *

Հունվարի 10-ին՝ չորեքշաբթի.—Նոր տարվա և ս. Մննդյան տոների արձակուրդներից հետո, հոգևոր ճեմարանում վերսկսվեցին դասավանդությունները։

* * *

Հունվարի 13-ին՝ շաբաթ.—Ը օր Մննդեան։ Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը։

* * *

Հունվարի 14-ին՝ կիրակի.—Ա կիրակի ղկնի Մննդեան։

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը՝ ս. Հովհաննես Մկրտչի մասին։

* * *

Հունվարի 15-ին՝ երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվեցին 1967—1968 ուսումնական տարվա կիսամյա քննությունները, որոնք կտևեն մինչև հունվարի վերջը։